

Հ. ԲՈՒՄԱՆՅԱՆ
14. Ա. ՇՐՈՎԵԳՅԱՆ

Ա

Պ

Ի



ՊԵՀՀՐԱՅ · 1937 · ՅԵՐԵՎԱՆ

23 APR 2013

9226

2011 - 05

101155
P-89



ՔԱԶ ՆԱԶԱՐ

1



36591-62

Լինում ե չի լինում մի խեղճ մարդ՝ անունը նազար։ Ես նազարը մի անջնորհք ու ալարկութ մարդ ե լինում։ Ենքան ել վախկոտ, ենքան ել վախկոտ, վոր մենակ վոտը վոտի առաջ չեր դնիլ, թեկուզ սպանելիր։ Որը մինչև իրիկուն կնդա կողքը կտրած՝ նրա հետ դուրս

գնալիս դուրս եր գնում, տուն գալիս՝ տուն զալի։ Դրա համար ել անունը գնում են վախկոտ Նազար։

Ես Վախկոտ Նազարը մի գիշեր կնքա հետ շեմքն ե դուրս գալի։ Վոր շեմքն ե դուրս գալի՝ տեսնում ե ճրբքճրբքան լուս լուսնակ գիշեր՝ ասում ե.

— Այ կնիկ, ինչ քարվան կտրելու գիշեր ե... Սիրտս ասում ե՝ վեր կաց գնա Նընդըստանից յեկող Շահի քարվանը կտրի բեր առնը լցրու...»

Կնիկը թե.

— Զենդ կտրի, տեղդ նստի, քարվան կըտրողիս մտիկ արա...»

Նազարը թե.

— Անզգամ կնիկ, ինչու չես թող անում յես գնամ քարվան կտրեմ բերեմ տունը լցնեմ։ Ել ինչ տղամարդ եմ յես, ել ինչու յեմ գդակ ծածկում, վոր դու համարձակում ես իմ առաջը խոսես։

Վոր շատ կռվում ե՝ կնիկը տուն ե մըտնում դուռը փակում։

— Հողեմ եղ վախկոտ դլուխդ, դե հիմի գնա քարվան կտրի։



Ես Նազարս մընում ե դռանը։ Վախկոտ լեղապատռ ե լինում։ Ինչքան աղաջում — պաղատում ե, վոր կնիկը դուռը բաց անի, չի լինում, բաց չի անում։ Ճարը կտրած գնում ե մի պատի տակի կուչ ե գալի, դողալով գիշերն անց ե կացնում մինչև լուսը բացվում ե։ Նազարը խռոված պատի տակին արևկող արա սպասում ե, վոր կնիկը գա տուն տանի, ու միտք ե անում։ Ամառվա շոգոր՝ գագագած ճանձեր։ Ինքըն ել ենքան ալարկոտ, վոր

ալարում ե քիթը սրբի — ճանճերը գալիս են
սրա քիթ ու պըուունդին վեր գալի, լցվում: Վոր
շատ նեղացնում են՝ ձեռը տանում ե լերեսին
զարկում: Վոր յերեսին զարկում ե՝ ճանճերը
ջարդվում են, առաջին վեր թափում:

— Վահ, ես ինչ եր...» Մնում ե զարմա-
ցած:



Ուզում ե համրի թե մի զարկով քանիսն
սպանեց՝ չի կարողանում: Մտածում ե, վոր հա-
զարից պակաս չի լինիր:

— Վահ, — ասում ե, — յես եսպես տղամարդ
եմ ելել ու մինչև եսոր չեմ իմացե՛լ... Յես,
վոր մի զարկով կարող եմ հազար շունչ կենդա-
նի ջարդել, ել ինչ եմ ես անպիտան կնդա կող-
քին վեր ընկել...»

Եստեղից վեր ե կենում ուղիղ գնում ի-
րենց գլուղի տերաերի մոտ:
— Տերտեր, որինչ ի տեր:
— Աստված վորհնի, որդիս:



— Տերտեր, բա չես ասիլ եսպես եսպես
բան:

Պատճում ե իր քաջագործությունը ու հե-

տըն ել հայտնում ե, վոր պետք ե իր կնդանից
կորչի, միան խնդրում ե՝ իր արածը տերտերը
գրի, վոր անհայտ չմնա, ամենքն ել կարդան
իմանան։ Տերտերն ել, կատակի համար, մի փա-
լասի կտորի վրա գրում ե.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Վոր մին զարկի՝ ջարդի հազար։

Ու տալիս ե իրեն։

Նազարս ես փալասի կտորը մի փետի ծե-
րի ամրացնում ե, մի ժանգոտած թրի կտոր,
կապում մեջքը, իրենց հարևանի իշխն նստում
ու գլուղից հեռանում։

2

Իրենց գլուղից դուրս ե գալի մի ճամփա-
յե ընկնում ու գնում։ Ինքն ել չի իմանում, թե
եղ ճամփեն ուր ե տանում։

Գնում ե գնում, մին ել յետ ե նախում,
տեմնում ե գլուղից հեռացել ե։ Եստեղ սիրտն
ահ ե ընկնում։ Իրեն սիրտ տալու համար սկը-
սում ե քթի տակին մրմուար, լերգել, իրեն իշ-
քեն խոսել, իշի վրա բարկանալ։ Քանի հեռա-



նում ե՝ ենքան վախը սաստկանում ե, քանի
վախը սաստկանում ե՝ ենքան ձենը բարձրաց-
նում ե, սկսում ե զորդուալ, հարայ-հրոց անել,
հետն ել մյուս կողմից եշն ե սկսում զուալ։

Ես աղմուկից ու աղաղակից թռչունները մոտիկ ծառերից են թռչում, նապաստակները թփերից են փախչում, գորտերը կանանչիցն են ջուրը թափում...

Նազարը ձենն ավելի լե գլուխը գցում. իսկ վոր մտնում ե անտառը — թվում ե՝ թե անեն մի ծառի տակից, ամեն մի թփի միջից, ամեն մի քարի լեռեկից՝ վորտեղ վոր ե գաղան ե հարձակելու կամ ավաղակ. սարսափած սկսում ե գորգոռալ, վրնց գորգոռալ — ականջդ վոչ լսի:

Դու մի՞ ասիլ հենց ես ժամանակ մի գյուղացի ձին քաշելով անտառում միամիտ գալիս ե: Ես զարհուրելի ձենը ականջն ե ընկնում թե՛ կանգնում ե.

— Վայ, — ասում ե, — վրնց թե իմն ել եստեղ եր հատել. կա-չկա ես ավաղակներ են...»

Զին թողնում ե, ընկնում ե ճամփի տակի անտառն ու՝ լերկու վոտն ուներ լերկուսն ել փոխ ե առնում՝ փախչում:

Բախտը սիրեմ Քաջ Նազար. գորգոռալով գալիս ե տեսնում մի թամքած ձի ճամփի մեջտեղը կանգնած իրեն ե սպասում: Իշխցը վեր ե գալի ես թամքած ձիուն նստում ու շարունակում իր ճամփեն:

Շատ ե գնում, քիչ ե գնում, շատն ու քիչն ել ինքը կիմանար, գնում ե ընկնում մի գյուղ. ինքը դյուղին անծանոթ գյուղն իրեն: Ուր նա, գուր չի գնա: Մի տանից զուռնի ձեն ե լսում. ձին քշում ե ես ձենի վրա, գնում ե ընկնում մի հարսանքատուն:

— Բարի որ ձեզ:

— Այ աստծու բարին քեզ, բարով հազար բարի լեկար:

Համեցեք հա, համեցեք. դե զոնախն ասծունն ե. սրան տանում են իր դրոշակով սուփերի վերի ծերին բազմեցնում: Աչքդ են բարին տեսնի, ինչ վոր լցնում են առաջը — թե ուտելիք, թե խմելիք:

Հարսանքավորները հետաքրքրվում են իմանան, թե ով ե ես տարորինակ անծանոթը: Ներքի ծերից մինը բոթում ե իր կողքի նստածին ու հարցնում, սա ել իր կողքի նստածին ե բոթում, եսպես հերթով իրար բաթելով ու հարցնելով բանը մնում ե վերի ծերին նստած տերտերին: Տերտերը մի կերպով դոնախի դրաշակի վրա կարդում ե.



Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Վոր մին զարկի՝ ջարդի հազար:

Կարդում ե ու զարհուրած հայտնում ե իր
կողքի նստածին, սա ել իր կողքի նստածին,

սա ել յերորդին, յերրորդը չորրորդին. Եսպե-
սով հասնում ե մինչև գոան տակը ու ամբողջ
հարսանքատունը գրըմբում ե թե՝ բա չես ամիւ
նորեկ զոնախն ե ինքը.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Վոր մին զարկի՝ ջարդի հազար:

— Քաջ Նազարն ե հա... բացականչում ե
պարծենկոտի մինը, ինչքան ե փոխվել. միան-
գամից լավ չճանաչեցի...»


Յեվ մարդիկ են գտնվում, վոր պատմում
են նրա արած քաջագործությունները, հին ծա-
նոթությունն ու միասին անցկացրած որերը:

— Հապա ինչպես ե, վոր եսպես մարդը
հետը վոչ մի ծառա չունի, — զարմանքով հարց-
նում են անծանոթները:

— Եղան ե դրա սովորություննը, ծառա-
ներով ման գալ չի սիրում: Մի անգամ յես
հարցըի, ասավ՝ ծառան ինչ եմ անում, ամբողջ
աշխարհին իմ ծառան ե ու իմ ծառան:

— Հապա ինչպես ե, վոր մի կարգին թուր
չունի, ես ժանգուա յերկաթի կտորն ե մեջքին
կապել:

— Շնորհքն ել հենց դրա մեջնե ե, վոր ես
ժանգուա յերկաթե կտորով մին զարկես ջարդես



հազար, թե չե լավ թրով—բնչ կա վոր, սովորական քաջերն ել են ջարդում։

Ու ապշած ժողովուրդը վոտի յե կանգնում խմում ե Քաջ Նազարի կենացը։ Իրենց միջի խելոքն ել դուրս ե դալի ճառ և ասում Նազարի առաջ ասում ե՝ մենք վաղուց ելինք լսել քո մեծ հոչակը, կարոտ ելինք յերեսդ տեսնելու և ահա եսոր բախտավոր ենք, վոր քեզ տեսնում ենք մեր մեջ։ Նազարը հառաջում ե ու ձեռքը թափ ե տալի։ Ժողովրդականները խորհրդավոր իրար աչքով են անում, հասկանում են, թե եղ հառաջանքն ու ձեռքի թափ տալն ինչքան բան կնշանակեր...

Աշուղն ել, վոր ենտեղ եր, ձեռաց յերգ ե հորինում ու յերգում։

Բարով յեկար, հազար բարի,
Հըզոր արծիվ մեր սարերի,
Թագ ու պարծանք մեր աշխարհի,
Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Վոր մին զարկես ջարդես հազար։

Խեղճ տըկարին դու ապավեն,
Ազատ կանես ամեն ցավեն,
Մեզ կըփրկես անիրավեն,
Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Վոր մին զարկես ջարդես հազար։

Մատաղ ենք մենք քո դրոշին,
Մեջքիդ թըրին, տակիդ ուաշին,
Նրա վոտին, պոչին, բաշին,
Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Վոր մին զարկես ջարդես հազար։

Ու ցրվելով հարբած հարսանքավորները
տարածում են ամեն տեղ, թե գալիս ե
Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Վոր մին զարկի՝ ջարդի հազար։

Պատմում են նրա զարմանալի քաջակոր-
ծությունները, նկարագրում են նրա ահուելի
կերպարանքը։ Ու ամեն տեղ իրենց նորածին
յերեխանների անունը դնում են Քաջ Նազար։

Հարսանքատնից հեռանում ե Նազարն ու
շարունակում ե իր ճամփեն։ Գնում ե հասնում
մի կանանչ դաշտ։ Ես կանանչ դաշտում ձին
թողնում ե արածի, դրոշակը տնկում ե, ինքն
ել դրոշակի շվաքումը պառկում քնում։

Դու մի ասիլ ոխտը հսկա յեղբայրներ կան,
ոխտը ավազակապետ, ես տեղերը նրանցն են,
իրենց ամրոցն ել մոտիկ սարի գլխին ե։ Ես
հսկաները վերևից մտիկ են տալիս՝ վոր մի
մարդ յեկել ե իրենց հանդում վեր ե յեկել։ Շատ
են զարծանում, թե ես ինչ սրտի տեր մարդ
պետք ե լինի, քանի գլխանի, վոր առանց քաշ-
վելու յեկել ե իրենց հանդում հանգիստ վեր
յեկել ու ձին ել բաց թողել։ Ամեն մինը մի
գուրզ*) ուներ քառասուն լդրանոց։ Ես քառա-
սուն լդրանոց գուրզերը վերցնում են գալի։
Գալիս են ինչ են տեսնում. հրես մի ձի արա-
ծում ե, մի մարդ կողքին քնած, գլխավերել
մի դրոշակ տնկած, դրոշակի վրեն դրած։

Անհաղթ հերսո Քաջըն Նազար,
Վոր մին զարկի ջարդի հազար։
Վայ, Քաջ Նազարն ե... Մատները կծում

*) Գուրզ — մկունդ

365-81-62



Են հսկաներն ու մնում են տեղները սառած։
Դու մի՛ ասիլ հարբած հարսանքավորների տա-
րածած լուրը սրանց ել ե լինում հասած։ Ես-
պես թուքները ցամաքած, չորացած սպասում
են, մինչև Նազարն իր քունն առնում ե ու
զարթնում. վոր զարթնում ե աչքերը բաց ե
անում տեսնում գլխավերելը քառասուն լրբա-
նոց գուրզերն ուսներին ոխտն ահռելի հսկա-
ներ կանդնած՝ ել փորումը սիրտ չի մնում։
Մանում ե իր գրոշակի յետեն ու սկսում ե դո-
ղալ, վոնց վոր աշունքվա տերելը կղողա։ Ես
հսկաները վոր տեսնում են սա գունատվեց ու
սկսեց դողալ, ասում են՝ բարկացավ, հիմի վոր-
տեղ վոր ե մի զարկով ոխտիս ել կսպանի, ա-
ռաջին գետին են փոփում ու խնդրում են.

— Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Վոր մին զարկես՝ ջարդես հազար։

Մենք լսել ելինք քո ահավոր անունը, տե-
սությանդ ելինք փափաղում։ ալժն բախտավոր
ենք, վոր քո վոտով ես յեկել մեր հողը։ Մենք,
քո խոնարհ ծառաներդ՝ ոխտն ախպեր ենք, ա-
հա մեր ամրոցն ել են սարի գլխին ե՝ մեջը
մեր գեղեցիկ քուլը։ Աղաջում ենք շնորհ ա-
նես գաս մեր հայը կտրես...»

Եստեղ Նազարի շունչը տեղն ե գալի, նըս-
տում ե իր ձին, նրանք ել դրոշակն առած ա-
ռաջն են ընկնում ու հանդիսավոր տանում են
իրենց ամրոցը։ Տանում են ամրոցում պահում
պատվում թագավորին վայել պատվով, ու են-
քան են խոսում նրա քաջագործություններից,
ենքան են գովում, վոր իրենց գեղեցիկ քուլ-
ը սիրահարվում ե վրեն։ Ինչ ասել կուզի՝
հարզն ու պատիվն ել հետն ավելանում ե։

5

Ես Ժամանակ մի վագր ե լուս ընկնում ես
յերկրում ու սարսափ ե գցում ժողովրդի վրա։
Ո՞վ կսպանի վագրին, ո՞վ չի սպանիլ։ Իհարկե
Քաջ Նազարը կսպանի։ Ել ո՞վ սիրտ կանի վագ-
րի դեմ գնա։ Ամենքն ել Նազարի յերեսին են
մտիկ տալի։ վերել մի աստված, ներքել մի
Քաջ Նազար։

Վագրի անունը լսելուն պես Նազարը վա-
խից դուրս ե վազում, ուզում ե փախչի յետ
զնա իրենց տունը, իսկ կանգնածները կարծում
են թե վազում եր, վոր գնա վագրին սպանի։

Նշանածը բռնում է կանգնեցնում, թե՛ ուր ես վազում եղակես առանց զենքի, զենք առ հետդ ենակես գնա: Զենք է բերում տալիս իրեն, վոր գնա իր վասրքի վրա մի քաջություն ել ավելացնի: Նազարը զենքն առնում է դուրս գնում: Գնում է անտառում մի ծառի բարձրանում, վըրեն տապ անում, վոր վոչ ինքը վագրին պա-



տահի, վոչ վագրը իրեն: Ծառի վրա կուչ ե դալի ու Նազարն մվ կտա — հոգին դառել ե կորիի հատ: Հակառակի նման անտեր վագրն ել

ցալիս ե հենց ես ծառի տակին պառկում: Նազարը վոր վագրին չի տեսնում — լեզին ջուր ե կտրում, աչքերը սեանում են, ձեռն ու վոտը թուլանում են ու, թըրմի, ծառիցը ընկնում է գազանի վրա: Վագրը սարսափած տեղիցը վեր է թոչում, Նազարն ել վախից կոշշում ե սրա մեջքին: Եսպես զարհուրած Նազարը ուշջքին կպած ես խրտնած վագրը վախչում ե, վոնց ե վախչում, ել սար ու ձոր, քար ու քոլ չի հարցընում:

Մարդիկ մին ել տեսնում են, վահ, Քաջ Նազարը վագրին նստած քշում ե:

— Հայ-հարայ, լեկեք հա, լեկեք, Քաջ Նազարը վագրին ձի յե շինել հեծել... տվեք հատվեք...» Սրտափորփում են, ամենքը մի կողմից հարայ-հրոցով, հըրհըոցով հարձակվում են՝ խանչալով, թրով, թվանքով, քարով, փետով տալիս են սպանում:

Նազարը վոր ուշքի յե զալի, լեզուն բացվում ե «ափսաս, — ասում ե, — ընչի սպանեցիք, զոռով մի ձի ելի շինել նստել... ենքան պետք ե քշելի վնր...»

Լուրը գնում ե համանում ե ամրոցը: Մարդ, կին, մեծ, պստիկ՝ ժողովուրդը դուրս ե թա-

վիում նազարին ընդունելու։ Վրեն յերգ են կա-
պում ու լերգում։

Ես աշխարհքում,
Մարդկանց շարքում
Ո՞վ կը ինի քեզ հավասար,
Ո՞վ Քաջ նազար։

Ինչպես ուրուր,
Կայծակ ու հուր,
Բարձր բերդից թռար հասար,
Ո՞վ Քաջ նազար։

Ահեղ վագրին
Արիր քո ձին,
Հեծար անցար դու սարեսար,
Ո՞վ Քաջ նազար։

Մեղ փըրկեցիր,
Ազատեցիր,
Փառք ու պարծանք քեզ դարեւար,
Ո՞վ Քաջ նազար։

Ու պսակեցին Քաջ նազարին հսկաների
գեղեցիկ քրոջ նետ, ոխտն որ, ոխտը զիշեր հար-
անիք արին, յերգերով գովեցին թագավորին ու
թագուհուն։



- Հուսընկան նոր սարն յելավ,
Են մւմ նման եր:
- Հուսընկան նոր սարն յելավ,
Են Քաջ Նազարն եր:
- Արեգակ շաղեցաղ,
Են մւմ նման եր:
- Արեգակ նոր շաղեցաղ,
Են իր Նազ-յարն եր:

Մեր թագավորն եր կարմիր,
Իրեն արեն եր կարմիր,
Թագն եր կարմիր, հայ կարմիր,
Կապեն կարմիր, հայ կարմիր,
Գոտին կարմիր, հայ կարմիր,

Սոլեր կարմիր, հայ կարմիր,
Թագուհին կարմիր, հայ կարմիր,
Կարմիր թագուհուն բարե,
Կարմիր թագվորին արե:

Շնորհավոր, շնորհավոր,
Քաջ Նազարին շնորհավոր,
Իր Նազ-յարին շնորհավոր,
Վողջ աշխարհին շնորհավոր:

Դու մի ասիլ ես աղջկանը ուզած ե լինում հարևան յերկրի թագավորը: Վոր իմանում ե իրեն չեն տվել՝ ուրիշի հետ են ամուսնացրել՝ զորք ե կապում պատերազմով դալիս ե ոխտն ախտոր վրա:

Ես ոխտը հսկան գնում են Քաջ Նազարի մոտ, պատերազմի լուրը հայտնում են, գլուխ ն տալի առաջը կանգնում՝ հրաձան են խընդրում:

Պատերազմի անունը վոր լսում ե սարսափում ե նազօրը, դուրս ե պրծնում, վոր փախչի յետ գնա իրենց գլուղը: Մարդիկ կարծում են ուզում եր իսկույն դուրս վազել հարձակվել թշնամու բանակի վրա: Առաջն են ընկնում բռնում են խնդրում, թե ախար առանց գենքի ու զրահի մենակ մւր ես գնում, ինչ ես անում, գլխիցդ ձեռք ես վերցրել, ինչ ե:

Բերում են զենք ու զրահ են տալի, կնիկըն ել յեղբալրներին խնդրում ե, վոր չթողնեն նազարին իր քաջությունից տարված մենակ հարձակվի թշնամու զորքի վրա: Յեկ լուրը գնում տարածվում ե զորքի ու ժողովրդի



մեջ, լրտեսների սիջոցով ել հասնում ե թշնամուն, թե Քաջ Նազարը մենակ առանց զենքի թռչում եր դեպի պատերազմի դաշտը, հաղիվ են կարողացել զսպել ու շրջապատած բերում են...

Պատերազմի դաշտում մի ամենի նժույգ ձի յեն բերում Նազարին նստեցնում վրեն։ Վոզեվորված զորքն ել հետը վեր ե կենում ահագին աղմուկով, — կեցցե Քաջըն Նազար... մահ թրշնամնւն...

Նազարի տակի նժույգը, վոր տեսնում ե վրեն ինչ անպետքի մինն ե նստած՝ խրխնջում ե, գլուխն առնում ու թռչում առաջ, ուղիղ դեպի թշնամու բանակը։ Զորքերը կարծում են Քաջ Նազարը հարձակվեց, ուսուա լեն կանչում ու իրենք ել լետեհց հարձակվում ամենայն սաստկությամբ։ Նազարը վոր տեսնում ե չի կարողանում իր ձիու գլուխը պահի, քիչ ե մնում վեր ընկնի, ձեռը գցում ե, ուզում ե մի ծառից փաթաթվի, դու մի ասիլ ծառը փթած ե, մի գերանաշափ ճյուղը պոկ ե գալիս մնում ձեռին։ Թշնամու զորքերը, վոր առաջուց համբավը լսել ելին ու անը սրաներումն եր, ես ել վոր իրենց աչքով տեսնում են՝ ել փորներու-



մը սիրտ չի մնում. յերես են շուռ տալի, --փախի, վոր փախի, թե մարդ ես գլուխդ պըճացրու, վոր Քաջ Նազարը ծառերն արմատահան անելով գալիս ե...»

Եղ որը թշնամուց ինչքան կռառվում է կռտորվում, մնացածները թուրները դնում են Քաջ Նազարի վոտի տակին, հայտնում են ի-

բենց հպատակությունն ու հնազանդությունը:

Ու պատերազմի ահեղ դաշտից Քաջ Նազարը հսկաների ամրոցն ե վերագառնում։ Ժողովուրդը հաղթական կամացներ ե կապում, աննկարագրելի վոգեորությամբ, ուռաներով և կեցցեներով, տերդով ու յերաժշտությունով, աղջիկներով ու ծաղիկներով, պատգամավորություններով ու ձառերով առաջն ե գուրս գալի, ենպես մի փառք ու պատիվ, վոր Նազարը մնացել եր ապշած շըշկլված։

Եսպես առքով-փառքով ել բերում հայտարարում են իրենց թագավոր ու բազմեցնում են թագավորի թախտին։ Քաջ Նազարը դառնուու ե թագավոր, են հսկաներից ամեն մեկին ել մի պաշտոն ե տալիս։ Մին ել տեսնում ե աշխարհը իր բուան մեջ։

Ասում են մինչև եսոր ել դեռ ապրում ու թագավորում ե Քաջ Նազարը։ Ու յերբ քաջությունից, խելքից, հանձնարից մոտը խոսք են դցում՝ ծիծաղում ե, ասում ե.

— Ի՞նչ քաջություն, ի՞նչ խելք, ի՞նչ հանձնար, դատարկ բաներ են բոլորը։ Բանը մարդուս բախտն ե։ Բախտ ունես — քեֆ արա...»



Ցեվ ասում են՝ մինչև Խորել քեֆ ե ա-
սում Քաջ Նազարը ու ծիծաղում Երաշշալիքի
ՀՍՍՌ-Արմ. ՀՀ
վրա:

Կ. Ա. Մաշլան
Ապահովական Անդամակցություն

ՎՐԻ ՊԱԿ

ՀՀ ՀՀ գործը վերեկց կարդալ այսպես. Ու՞ր զնա, ուր չի զնա և այլն:

Պատ. խմբագիր՝ Եղ. Չոփուրյան
Տեխ. խմբ. յել Վիմ. Եկարիչ Յ. Դանջո
Սրբագրիչներ՝ Հ. Մանուկյան, Հ. Դոլոխանյան

ՀՀ Ազգային գրադարան



NL0396404

Հրատարկ. № 3867, Գլավլիտի լիազոր Ա-1152
Տիրած 10,000, վիճակը. Պիտիրատի տպարանի, պատվ. № 1098

ԳԻՒԾ 95 Կ.

9226.

84

2500



Օ. ՏՈՄԱՆՅԱՆ
ԽՐԱԲՐԴԻ ՀԱՅԱՀ
Գոսիզդատ Արմ. Հ. Ս. Բ.

891-995

Պ-89